Թումբ՝ փոքրիկ ժայռ մ՚ալիքներուն ամեհի։
Դաւատարիմ հոն էր որ եկաւ, ու եղաւ
Ջարդուփրշուր՝ զարնելով խութերուն,
Եւ մէջիններն հազիւ պրծան մահապուր։
Բայց քրշուեցան կապուտացառուկ հինգ նաւեր
Ալիքներէն՝ հովերէն դէպ Եգիպտոս։
Մինչ Մենելաւ իր նաւերով կը շրջէր
Օտար մարդոց մէջ հոն ոսկի և պաշար
Հաւաքելով առատօրէն, Էգիսթոս
Կը համակէր ասդին իր տունը սուգով,
Ըսպաննելով Ագամեմնոնն Ատրիդեան,
Եւ իր լուծին տակ կը զրսպէր ժողովուրդն։
Եօթը տարի իշխեց հարուստ Միկէնքի,
Բայց ութերորդ տարին դարձաւ Ալթէնքէն՝
Իրեն պատիժ՝ աստուածային Որեստէսն,
Եւ ըսպաննեց իր հօր խոշոշը՝ դշխեմ
Էգիսթն՝ իր վեհ հօր պերճ արեւը մարողն։
Ըսպաննելով այսպէս զանի՝ կերցուց ան
Ատելի մօրն և վատշուէր Էգիսթի
Թաղմանական հացն ցոյներուն, և նոյն օրն
Ահեղագոռ Մենելաւոսը հասաւ,
Բերելով հետն ամբաւ գանձեր, որչափ բան
Որ կըրնային տանիլ նաւերն՝ որ ունէր։
Սիրելի, դուն ալ մի՛ երկայն թափառիր
Տունէդ հեռու թողլլքելով քու ինչքերդ,
Թողլով քու տանրդ մէջ յանդուգնն լիրբիր.
Գուցէ բաժնած իրենք իրենց մէջ՝ լափեն
Բոլոր գանձերդ, և զուր ընես այս ճամբան։
Բայց ես ըզքեզ կը յորդորեմ, կը ստիպեմ
Մենելաւին երթալու. ան նոր հասաւ
Օտար մարդոց քովէն, ուրկէ դառնալու
Բրնաւ պիտի յոյս չունենար սըրտին մէջ
Ան՝ զոր մրրրիկն իր ճամբէն դուրս հանելով
Քըշեց տարաւ դէպ ի մեծ ծով մ՚, այնքան մեծ՝
Ուրկէ և ոչ իսկ թըռչունները կըրնան
Մէկ տարիէն գալ՝ զայն կըտրել անցնելով,
Այնքան անհուն և վտանգաւոր ըլլալուն։
Բայց արդ գընա նաւովդ ու քու ՝նկերներովդ.
Իսկ եթէ դուն կ՚ուզես երթալ ցամաքէն,
Կառքս ու ձիերս ահա պատրաստ են քեզի,
Եւ որդիներս ալ պիտ՝ ըլլան առաջնորդ
Ու տանին դէպ ի դիւցային Լակեդեմոն՝
Ուր է խարտեաշ Մենելաւոսն։ Ակաչէ
Որ քեզ ըսողդն ըսէ. անի քեզ սուտ բան
Պիտի չըսէ, վասըն զի շատ ուշիմ է»։
Ըսաւ, մըտաւ արեւն ու մութը եկաւ,
Եւ անոնց՝ այս խօսքերն ըսաւ Ալթենաս
Աստուածուհին ծաւի. «Ո՛վ ծեր, շատ արդար
Են քու խօսքերդ, բայց զոհերուն լեզուներն
Օ՚ն կըտրեցէք և խառնեցէք անապակն,
Որ Նըլիրենք Պոսիդոնին և ուրիշ
Անմահներուն, ու երթանք քուն ըմբոշխնենք,
Չի ժամանակ է հանգըստի. լոյսն ահա
Դէպ արեւմուտք գընաց, և չէ իսկ օրէն
Նըստիլ երկայն դից կոչունքին, այլ քաշուիլ»։

Թրգմ. Հ. Ա. Ղազիկեան

Շարունակելի

ԵՐԵՔԵԼՈՒՄ

Ծիծառունք եկան թև ի թև.
Կը փըչէ սիւրը թեթև.
Կեանքի գարունն է բացուեր,
Փըթթեցնելով բիւր յոյսեր։

Ծովափին մօտ ծըփալից,
Նըշի՛ր, դուն ալ կը ժըպտիս.
Ծիծեռնակէ՛ն ալ առաջ
Հոգւոյս հընչեց քու աւաչ։

Կը ժըպտի յոյսն երեսիդ.
Բայց յոյզ ունիմ թանձրախիտ՝
Քու բաժակներ շուշանի
Արփւոյն դիմաց հոլանի։

Հեռու երկրէ՛ դուն եկար
Պըտուղ հողին ես օտար.
Բայց շիթ մ՚արցունք պանդրխտին
Քեզ կեանք տըւաւ վերըստին։

Թողիր երկիր մ՚աւազուտ,
Ահա քեզ լիճը կապոյտ,
Որուն ամէն մի ալիք՝
Հողիդ համբոյր տայ քաղցրիկ։

Դեռ հինգերորդն է գարուն
Որ կ՚ողջունէ քեզ ժըպտուն,
Ու կը նագիս երկնապաց
Կապոյտին մէջ զըրկաբաց։

Թող գարունները բիւր անցնին,
Ու ես տեսքովդ անձկագին՝
Ցիշեմ կեանքիս տըխրազգած
Այն դըրուագներն անմոռաց։

Հ. Եղիա Փէշիկեան

digitised by A.R.A.R.@